թէ հարկաւոր է ստորակացուցանել զանձն ոք ի միջոյ նոցա, որ վարեսցէ զնախանձաւոր և զծանրակշիռ պաշտօնն, զի մի ըստ պատահման տպեսցին գիրք ինչ, որ իւիք կերպիւ և իմացուածով ի մասին ինչ, թէև յոյժ փոքրագունի, հակառակ իցեն Ուղղափառ Հաւատոյ կամ Պսակաւորաց, և բարի վարուց, կամ ունիցին յինքեանս զոր և իցէ անվայել իր. իւրեանց գերազանց տէրութիւնքն, յետ քննելոյ զբանն և հարցանելոյ, և գտանելոյ ի մէջ Միանձանցն Արամեանց նոյնոյ կղզւոյն, թէ ո՛ ոք իցէ յարմար, ընդունակ, և հմուտ լցուցանելոյ զայնպիսի փափուկ և փոյթեռանդն պաշտօնատարութիւն, մտախորհ եղեն ի կացուցանել, որպէս ահա՝ առաջիկայ գրովս կացուցանեն և բացորոշեն. զի լցուսցէ զայսպիսի պաշտօնս Հ. Ստեփաննոս Մելքոնեան Աբբայն ասացելոց Միանձանց կարգին Սրբոյն Անտոնի Աբբային։ Եւ արդ՝ ուժգնութեամբ առաջիկայ բացորոշութեանս պարտի լինել ժրաջան հոգ, և փոյթ նոյնոյ Ռէվիզօրին տեսանելոյ և ընթեռնլոյ ամենայն ուշադրութեամբ և ամբողջութեամբ զամենայն գրեանս Հայոց ձեռագիրս, կամ յայլ անգամ տպեալս, որք պարտիցին վերստին տպիլ այսպէս յայսմ Քաղաքի, որպէս և ի տէրութեանս Վենէժականի, ուրոյն ուրոյն նայելով՝ եթէ ի նոյն գրեանս գտանիցէ իրս ինչ, որք հակադրեսցին, կամ իցեն որով և իցէ կերպիւ անհամաձայնք կամ Ուղղափառ Հաւատոյ, կամ Պսակաւորաց և բարի վարուց, կամ ունիցին յինքեանս զանվայելուչ ինչ, որպէս ասացաւ. որ եթէ գտանիցին, յայնժամ իցէ պարտական նոյն ինքն Ռէվիզօրն տալ զրոյց իսկական, պատրաստական և հաւատարմական՝ նմին իսկ Պետութեանն յաղագս պատշաճաւոր բացորոշութեանց։ Իսկ յորժամ ի տեսանելն զ ի վերայ ասացեալ գրեանսն, ոչինչ գտանիցէ ներհակ վերոգ|ր|եալ բանիցն, տուեալ լինի հրաման նմին Ռէվիզօրի և մանաւանդ պարտ լինի նմա առնել զվկայական մի իտալական լեզուաւ ի զատ թղթի, յորում զկնի նշանակելոց զօրն և զտարին, գրեսցէ զայսոսիկ իսկական բանս։

Վկայեմ ես ստորագրեալս թէ տեսի և փորձառեալ հաստատեցի (ըստ որում կամ որչափ ինչ հայի յՈւղղափառ Հաւատն, ի Պսակաւորսն և ի բարի վարս) զգիրքն Արամեան լեզուաւ, կոչեցեալ իտալականաւն, ևն. և ցուցցէ զամբողջ Խորագիրն զրքին, զառաջին բանսն սկզբանն և վախճանին. և թէ քանի՞ են հատորքն և ստուարութիւնն։ Ապա ստորագրեսցէ զնոյն վկայականն Ռէվիզօր անուամբ, որպէս և սովոր են առնել այլք Ռէվիզորք գրեանց, տալով իւրաքանչիւր հաղի ունիլ զնոյն վկայականն մերում Սէգրէթարի՝ յաղագս սովորական հրամանին նորուն իսկ Պետութեանն, զի թոյլ տացէ տպագրողին տպել. բաց յայսմանէ նկատեալ Գերազանց Տէրութեանցն իւրեանց, զի կարէ հանդիպիլ կամ վասն բացակայութեան, կամ վասն ստուար մատենին և երկարութեան գործոցն, կամ վասն պատճառի հիւանդութեան, թէ մենաւոր վերոյասացեալ Ռէվիզօրն չիցէ իւիք կերպիւ բաւական, կացուցին ևս և բացորոշեցին, զի ի սոյնպիսի պարագայս կարասցէ լցուցանել զտեղին նորա ըստ նախագրեալ եղանակաց նոյն վկայութեանց Հ. Մկրտիչ Անանիայի որդի Միանձնականն նոյնոյ կարգի, և առաջակայ Հ. Աբբային յիշատակելոյ, երկոքեան ևս, որք եղեն իսկ ընծայեցուցեալք ի բարեկեցութենէ Միանձանցն վերոյասացեալ Կղզւոյն Սրբոյն Ղազարու։

Պարտի այս գրոյս օրինակն տուեալ լինիլ նոցուն իսկ Ռէվիզօրից վասն իւրոյ անթերի կատարմանն, զոր քաջ իսկ համարի Պետութիւնն լիով եղանիլ յառաքինութենէն, ի բարեպաշտութենէ և յանարատութենէ նոյն Հարցն Աբբայի և առաջակայի ի վերանդր ակնարկեցելոյ։

Յոհ. Էմմ Փոգուրաթոր Ռէֆորմաթոր
Բարբոն Մորոզինի Փոգուրաթոր Ռէֆորմաթոր
Ալոյիսիոս Մոչենիկո, չորրորդ Ասպետ Փոգուրաթոր Ռէֆորմաթոր
Յոհ. Հերոն. Զուգգաթо Սէգրէթար